# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
# ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Անունը, ազգանունը՝** Նարինե Պետրոսյան

**2. Զբաղեցրած պաշտոնը՝** Մակրոտնտեսական քաղաքականության վարչության իրական հատվածի կանխատեսումների և վերլուծությունների բաժնի ավագ մասնագետ

**3. Գործուղման վայրը և ժամկետները՝** ք. Վիեննա 2024 թվականի հոկտեմբերի 28-ից մինչև նոյեմբերի 8-ը ներառյալ:

**4. Հրավիրող կողմը՝** Վիեննայի միացյալ ինստիտուտ

**5. Գործուղման նպատակը՝**

Մասնակցություն «Model-Based Monetary Policy Analysis and Forecasting / Մոդելավորման վրա հիմնված դրամավարկային քաղաքականության վերլուծություն և կանխատեսում» թեմայով դասընթացին:

**6. Քննարկված թեմաները՝**

1. Դրամավարկային քաղաքականության կառուցակարգեր
2. Դրամավարկային քաղաքականության փոխանցումային մեխանիզմները
3. Կանխատեսման և քաղականության վերլուծության համակարգեր
4. Քաղաքականության նպատակների հետևողականություն և մակրոտնտեսական թրենդներ
5. Տնտեսական քաղաքականության վերլուծության նորքեյնսյան մոդելի ներածություն
6. ՍԳԻ բաղադրիչները և հարաբերական գներ
7. Փոխարժեքի այլընտրանքային ռեժիմների նկարագրությունը
8. Երկարաժամկետ թրենդների և ճեղքերի գնահատումը
9. Վիճակագրության հրապարակման լագի պատճառով ներկայիս մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսում (Nowcasting)
10. Կարճաժամկետ կանխատեսումների դերը Կանխատեսման և քաղականության վերլուծության համակարգում
11. Հիմնական մոդելի ընդլայնումը հարկաբյուջետային հատվածի ներառմամբ
12. Հիմնական և այլընտրանքային սցենարների մշակում
13. ԿԲ կոմունիկացիան քաղականության որոշումների վերաբերյալ
14. Արտաքին և ներքին հավասարակշռության մոդելի կառուցում:

**7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

Մասնակցել է խմբի կողմից կատարված գործնական աշխատանքների, մասնավորապես՝ եռամսյակային կանխատեսման մոդելի միջոցով ընթացիկ տնտեսական իրավիճակի և տնտեսական քաղաքականության այլընտրանքային սցենարների մշակման և մասնակիցների ու դասընթացավարների հետ քննարկման աշխատանքներ:

**8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Դասընթացի շրջանակներում հանդիպումներ չեն եղել և փաստաթղթեր չեն ստորագրվել:

**9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Դասընթացից ստացված գիտելիքները և տրամադրված գործիքները կկիրառվեն մակրոտնտեսական քաղաքականության վարչության կողմից իրականացվող աշխատանքներում, մասնավորապես՝ Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից տրամադրվող տեխնիկական աջակցության շրջանակներում Եռամսյակային կանխատեսման կիսակառուցվածքային մոդելի (QPM) մշակման, տնտեսական քաղաքականության վերլուծության ու հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսման, ինչպես նաև քաղաքականության այլընտրանքային սցենարների մշակման և վերլուծության նպատակների համատեքստում:

**10. Գործուղվող՝**

Մակրոտնտեսական քաղաքականության
վարչության իրական հատվածի
կանխատեսումների և վերլուծությունների
բաժնի ավագ մասնագետ

Նարինե Պետրոսյան

**11.11.2024թ.**